



ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1

ՁԻԱՀ-Ի ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ



«ՀԱՍՆԵԼ ԶՐՈՅԻ»

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, դեկտեմբերի 1, 2011թ.

Այսօր ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում կայացավ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվան նվիրված մամլո ասուլիս, որին մասնակցում էին ՀՀ-ում ՄԱԿ-ի մշտական համակարգող Դաֆինա Գերչևան, ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Տիգրան Սահակյանը, ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տնօրեն Սամվել Գրիգորյանը, «Դրական մարդկանց հայկական ցանց» հասարակական կազմակերպության նախագահ Անահիտ Հարությունյանը, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Արարատյան Հայրապետական Թեմի ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և թմրամիջոցների ներարկային օգտագործողների ցերեկային կենտրոնի տնօրեն, Տեր Գրիգոր քահանա Գրիգորյանը, մի շարք հասարակական և միջազգային կազմակերպությունների, ՄԱԿ-ի գործակալությունների և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

Մամլո ասուլիսը բացեց և ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ-ում ՄԱԿ-ի մշտական համակարգող Դ.Գերչևան:

Այնուհետև ելույթ ունեցավ ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Տ.Սահակյանը: Նա խոսեց ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիմնախնդիրների, մեր երկրում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ուղղությամբ տարվող աշխատանքների, ձեռքբերումների և առկա խնդիրների մասին՝ նշելով, որ հանրապետությունում իրականացվում են լայնածավալ աշխատանքներ ՄԻԱՎ վարակի համաճարակին արդյունավետ հակազդելու, համաճարակի հետևանքները մեղմելու ուղղությամբ: Արդեն իսկ միջազգային խորհրդատուների կողմից կատարվել են ՀՀ-ում 2007-2011 թվականների համար ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի կարևորագույն բաղադրիչների գնահատումներ, որոնք արձանագրել են զգալի առաջընթաց երկրում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման գործում: Նա նշեց, որ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ազգային ծրագրի շրջանակներում հանրապետությունում իրականացվում են կանխարգելիչ ծրագրեր ՄԻԱՎ-ի նկատմամբ առավել վտանգի ենթարկվող խմբերի և երիտասարդության շրջանում, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող մարդկանց տրամադրվում է բուժում, խնամք և աջակցություն, իրականացվում է մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում, տրամադրվում է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն, ստեղծվում են բժշկական օգնության տրամադրման և լաբորատոր ենթակառուցվածքներ, ապահովվում է դոնորական արյան անվտանգությունը, կատարվում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ախտորոշմանն ուղղված լաբորատոր հետազոտություններ և այլն: Արդյունքում բարելավվել են ՄԻԱՎ վարակի

ախտորոշումն ու հայտնաբերումը, ՄԻԱՎ վարակի և համավարակների կառավարումը, հիվանդների դիսպանսերային հսկողությունը: Որպես նշանակալի ձեռքբերումներ նախարարի տեղակալը նշեց, որ այսօր ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդներին անվճար տրամադրվում է հակառետրովիրուսային բուժում, որը հասանելի է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով բոլոր հիվանդներին, որոնք ունեն բուժման ցուցում և տվել են իրենց համաձայնությունը: Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում, այդ թվում կանխարգելիչ հակառետրովիրուսային բուժում, տրամադրվում է ՄԻԱՎ վարակ ախտորոշում ունեցող բոլոր հղի կանանց և նրանցից ծնված երեխաներին, որոնք ապահովվում են նաև արհեստական կաթնախառնուրդներով: Շնորհիվ իրականացված համալիր միջոցառումների, 2007 թվականից ի վեր, մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում ստացած մայրերից ծնված երեխաների շրջանում ՄԻԱՎ վարակի որևէ դեպք չի արձանագրվել: 2001 թվականից ի վեր հանրապետությունում չի արձանագրվել նաև դոնորական արյան միջոցով ՄԻԱՎ-ով վարակման որևէ դեպք:

Նախարարի տեղակալը ներկաներին տեղեկացրեց, որ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդմանն ուղղված միջոցառումների շարունակականության ապահովման նպատակով մշակման ընթացքում է 2012-2016 թվականների համար նախատեսված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման նոր ազգային ծրագրի նախագիծը, որը պատրաստ լինելուն պես կներկայացվի ՀՀ կառավարություն՝ հաստատման համար: Նա նաև հույս հայտնեց, որ այսօր Հայաստանում պետական մակարդակով ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնդիրներին հատկացվող ուշադրությունը և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համաճարակի հակազդմանն ուղղված ազգային ծրագրի շրջանակներում միջազգային տարբեր կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող միջոցառումները հնարավոր կդարձնեն տարբեր հոշակագրերով մեր երկրի ստանձնած պարտավորությունների լիարժեք իրագործումը և համաճարակին արդյունավետ հակազդումը:

«Դրական մարդկանց հայկական ցանց» հասարակական կազմակերպության նախագահ Ա.Հարությունյանը խոսեց ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ առկա խարանի և խտրական վերաբերմունքի, դրանք նվազեցնելու ուղիների, հասարակության մեջ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց լիարժեք ինտեգրման անհրաժեշտության մասին:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և հիվանդների հոգևոր աջակցման գործում եկեղեցու դերի ներկայացմանն էր նվիրված Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Արարատյան Հայրապետական Թեմի ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և թմրամիջոցների ներարկային օգտագործողների ցերեկային կենտրոնի տնօրեն, Տեր Գրիգոր քահանա Գրիգորյանի ելույթը:

ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տնօրեն Ս.Գրիգորյանը ներկայացրեց ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակն աշխարհում և Հայաստանում, խոսեց աշխարհում, տարածաշրջանում և ՀՀ-ում համաճարակի զարգացման միտումների մասին:

Մամլո ասուլիսի ավարտին օրվա բանախոսները պատասխանեցին ներկաների հարցերին:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակն աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում

2010թ. դրությամբ աշխարհում կար 34մլն ՄԻԱՎ-ով ապրող մարդ. նրանց գերակշիռ մասը՝ 22,9մլն-ը բնակվում էր Սահարայից հարավ ընկած Աֆրիկայում, իսկ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում, որի մեջ մտնում են նաև Հայաստանը և նախկին Խորհրդային Միության հանրապետությունները, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց թիվը հասել է 1,5մլն-ի, ինչը ավելի քան 3,5 անգամ ավելի է 2001թ.-ի համեմատ:

2010թ. ընթացքում մոտ 2,7մլն մարդ է վարակվել ՄԻԱՎ-ով, նրանցից 160 հազարը՝ մեր տարածաշրջանում, դա ավելի քան 5 անգամ գերազանցում է Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայում և մոտ 3 անգամ՝ Հյուսիսային Ամերիկայում նոր դեպքերի թվին: 2010թ. ընթացքում ՄԻԱՎ-ով վարակվել է 390 հազար երեխա:

2010թ. ընթացքում ՁԻԱՀ-ից մահացել է մոտ 1,8մլն մարդ. նրանցից 90 հազարը մեր տարածաշրջանում:

2010թ. դեկտեմբերի դրությամբ ՄԻԱՎ-ի տարածվածությունը մեծահասակների շրջանում ամենաբարձրն է Սահարայից հարավ ընկած Աֆրիկայում և կազմում է 5%: Ընդհանուր առմամբ աշխարհում ՄԻԱՎ-ի տարածվածության ցուցանիշը միջինում կազմում է 0,8%: Մեր տարածաշրջանում այս ցուցանիշը 0,9% է, իսկ Հայաստանում՝ ավելի քան 5 անգամ ցածր է և կազմում է ընդամենը 0,17%:

1988թ. մինչև 2011թ. դեկտեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 1136 դեպք ՀՀ քաղաքացիների շրջանում, որոնցից 165-ը՝ ընթացիկ տարվա 11 ամիսների ընթացքում:

ՄԻԱՎ վարակով հիվանդների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 804 մարդ (70,8%), իգական սեռի ներկայացուցիչների մոտ արձանագրվել է վարակի 332 դեպք (29,2%): ՄԻԱՎ վարակի 22 դեպք (1,9%) է արձանագրվել երեխաների մոտ:

ՄԻԱՎ-ով վարակվածների 57%-ը 25-39 տարիքային խմբում է:

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի փոխանցման հիմնական ուղիներն են հետերոսեքսուալ ճանապարհը (53,7%) և թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով վարակումը (37,4%): Սրանցից բացի արձանագրվել են հոմոսեքսուալ ճանապարհով, մորից երեխային և արյան միջոցով ՄԻԱՎ վարակի փոխանցման դեպքեր:

ՄԻԱՎ վարակով հիվանդներից 543-ի մոտ (կին՝ 127, երեխա՝ 11) ախտորոշվել է ՁԻԱՀ, ընդ որում 94-ի մոտ՝ 2010թ. ընթացքում: Համաճարակի սկզբից գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների մահվան 261 դեպք: Մահացածների թվում կան 44 կին և 5 երեխա:

Թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով բոլոր վարակվածները եղել են տղամարդիկ, ընդ որում՝ նրանց մեծամասնությունը ժամանակավոր բնակվել և, հավանաբար, ՄԻԱՎ-ով վարակվել է ՌԴ-ում ու Ուկրաինայում: Բացի այդ, բոլոր ՄԻԱՎ վարակով հիվանդ տղամարդկանց մեծամասնությունը (53,5%) նույնպես թմրամիջոցների ներարկային օգտագործող է, իսկ գրեթե բոլոր կանայք վարակվել են սեռական ճանապարհով (98,4%):

ՄԻԱՎ վարակի դեպքերի առավելագույն թիվն արձանագրվել է մայրաքաղաք Երևանում՝ 462 դեպք, որը կազմում է բոլոր գրանցված դեպքերի 40,7%-ը: ՄԻԱՎ վարակի գրանցված

դեպքերի թվով երկրորդ տեղում Շիրակի մարզն է՝ 11,2%: ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի հաշվարկը 100 000 բնակչի հաշվով ցույց է տալիս, որ ամենաբարձր ցուցանիշը Շիրակում է՝ 45,1, որին հաջորդում են Երևանը, Լոռու, Արմավիրի մարզերը, համապատասխանաբար 41,4; 38,0; 33,4:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակի գնահատումը վկայում է, որ հանրապետությունում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հաշվարկային թիվը կազմում է 2500: